ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՈՍԿԵՀԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Էլ. հասցե sovxoz444@mail.ru

N 01-123

<<03>> 08 2021թ.

Արմավիրի մարզ գ. Ոսկեհատ
Հեռ. 5-29-35

ՀՀ Արմավիրի մարզպետ

Պարոն Հ. Մաքևոսյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի ղեկավարի կողմից ընդունված 2021 թվականի հուլիս ամսվա որոշումները:

Առդիր՝ 3 թերթ:

Ոսկեհատ համայնքի
ղ ե կ ա վ ա ր՝ Գ. Ներսիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնք

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հուլիսի 2021 թվականի N 17 Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 57-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի II գլխով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշումով, հաշվի առնելով այն, որ Սյունիք Գարեգինի Գյուրջյանին սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ N 10032017-04-0009 սեփականության իրավունքի վկայական տրված 10.03.2017թ, Ոսկեհատ համայնքի 1 փողոց 5 հասցեում գտնվող հողամասի վրա ինքնակամ կառուցված 345.0քմ արտաքին մակերեսով շինությունները ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի սահմանափակումների ցանկում, կառույցը չի հակասում քաղաքաշինական նորմերը և չի առաջացնում սերվիտուտ, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, համապատասխանում է համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերի նախատեսված գոտիներում գտնվող կառույցների՝ ծրագրի պայմաններին և Սյունիք Գարեգինի Գյուրջյանի 2021 թվականի Հուլիսի 27-ի դիմումը,

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի 1-ին փողոց 5 հասցեում գտնվող 1058.0քմ մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա գտնվող ինքնակամ կառուցված ընդհանուր 345.0 քմ արտաքին /մակերեսով շինությունները/ արտաքին՝ բնակելի տուն 1-ին հարկ 237.1քմ, բնակելի տուն 2-րդ հարկ 67.0քմ, սանհանգույց 5.4քմ, պահեստ 13.8քմ, ծածկոց 3.4քմ, պարիսպ 18.3քմ/ ճանաչել օրինական:

2. ինքնակամ կառուցված ընդհանուր 345.0 քմ արտաքին /մակերեսով շինությունները/ արտաքին ՝ բնակելի տուն 1-ին հարկ 237.1քմ, բնակելի տուն 2-րդ հարկ 67.0քմ, սանհանգույց 5.4քմ, պահեստ 13.8քմ, ծածկոց 3.4քմ, պարիսպ 18.3քմ/ օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետրը՝ 1209 դրամ է:

3.Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը սահմանվում է՝ ինքնակամ կառուցված ընդհանուր 345.0 քմ արտաքին /մակերեսով շինությունները/ արտաքին ՝ բնակելի տուն 1-ին հարկ 237.1քմ, բնակելի տուն 2-րդ հարկ 67.0քմ, սանհանգույց 5.4քմ, պահեստ 13.8քմ, ծածկոց 3.4քմ, պարիսպ 18.3քմ, ընդամենը՝ 417105 /չորս հարյուր տասնյոթ հազար հարյուր հինգ / ՀՀ դրամ /ՀՀ 900325184159/:

4.Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ՆԵՐՍԻՍՅԱՆ

2021 թվականի հուլիսի 27
ք. Ոսկեհատ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ
Ոսկեհատ համայնք
Հեռ. 0231-5-29-35

<< 29>> հուլիսի 2021թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ - 19 Ա

...........................................

## ՀԱԿՈԲ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> <<Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> 10.06.2008թ. ՀՕ-117-Ն Հայաստանի Հանրապետության օրենքի, դրույթներով, ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնական զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին 26.12.2002թ. թիվ ՀՕ-510-Ն Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներին համապատասխան, հիմք ընդունելով սեփականատեր Հակոբ Պետրոսի Մանուկյանի (ծնված 08.10.1963թ.) դիմումը և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Հողային Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներ չկան, չի հակասում քաղաքաշինական նորմերին:

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վերականգնել Արմավիրի մարզի, Ոսկեհատ համայնքում գտնվող գույքային միավորը 0.6739 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողը՝ օրինական տիրապետված և տիրապետվող հողամասը: Հողամասը չի ընդգրկված Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ, օրենքի ուժով ճանաչել Հակոբ Պետրոսի Մանուկյանի (ծնված 08.10.1963թ.) սեփականության իրավունքը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

գ. Ոսկեհատ